ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 24-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5 պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2018 թվականի հուլիսի 26-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառու կազմակերպության կողմից կանխավճար ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումը և բանկային երաշխիքը:
Փոփոխության նկարագրություն	Կնքվել է համաձայնագիր Պայմանագրի 16.02.2018թ. կնքված N2 համաձայնագրով սահմանված գումարից կանխավճար տրամադրելու վերաբերյալ:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 5.1.2 և 8.4 կետեր::

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

24.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5 գնման պայմանագրի

ք. Երևան 26.07.2018թ.

<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Երևանի տնաշինական կոմբինատ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 24.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1.2 և 8.4 կետերը, ինչպես նաև Կապալառուի կողմից ներկայացված բանկային երաշխիքը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 16.02.2018թ. կնքված N2 համաձայնագրի 1.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<1.1.1 Պայմանագրի ընդհանուր գնից մինչև 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամի չափով Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ Համաձայնագիրը կնքելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով մինչև 31.10.2018թ. ներառյալ: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է 2018 թվականի համար նախատեսված գումարի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ	<<Երևանի տնաշինական կոմբինատ>> ՓԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Սիլիկյան արդ. հանգույց-8
կառավարական տուն 3	<<Արդշինբանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Արաբկիր>> մասնաճյուղ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 247121341215
Հ/Հ 900011012698	ՀՎՀՀ 01228598
ՀՎՀՀ 02565827	
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
_____ Ա. Մկրտչյան	_____ Ս. Սարգսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
"ARMBUSINESSBANK" CJSC

N 4083-02

«06» 06 2018

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1.Ընդունելով ի գիտություն, որ ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և Երևանի տնտեսական կոմբինատ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 24.07.2017թ.-ին կնքված «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման 2018թ.-ի համար նախատեսված աշխատանքների կատարում» գնման թիվ ՀՀՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-17/5 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում կանխավճարի ստացման համար Պրինցիպալը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով (այսուհետ՝ երաշխիքային գումար), «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիքտվող անձ) ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ իբրև Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (ժառանգների) երաշխավոր և Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (ժառանգների) հետ համապարտ պարտապան՝ ի ապահովումն Պրինցիպալի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

2.Երաշխիքով «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պարտավորվում է Բենեֆիցիարի սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով Բենեֆիցիարին վճարել մինչև 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ՝ պահանջը ստանալուց 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում:

3.Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4.Պայմանագրի շրջանակներում Բենեֆիցիարի կողմից վճարվող կանխավճարի գումարը պետք է փոխանցվի Պրինցիպալի «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ թիվ 1150000879790100 հաշվեհամարին:

5.Երաշխիքը գործում է տրամադրման պահից մինչև 06 նոյեմբերի 2018թ.-ը ներառյալ:

6.Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) գումարի վճարման գրավոր պահանջը,

բ) Թիվ ՀՀՔՊԿ-ԲԸԱԾՁԲ-17/5 պայմանագրի պատճենը.

գ) Պրինցիպալի կողմից պայմանագրային պարտավորությունների խախտման հիմնավորումը:

7.Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8.Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝

ա) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,

բ) պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9.Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10.Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11.Սույն երաշխիքի [illegible]ությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am